«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների իրականացումը «Աշխարհագրություն» առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Ավետյան

Ուսումնական հաստատություն՝
Ալավերդու N 12 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն _____ էջ 3

Գլուխ 1 Գործնական աշխատանքների դասակարգումը _____ էջ 6

Գլուխ 2 Գործնական աշխատանքների կիրառությունը «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում _____ էջ 7

- Գործնական աշխատանքների նպատակները
- Գործնական աշխատանքների ընթացքին ներկայացվող մեթոդական պահանջներ
- Գործնական աշխատանքների գնահատման չափանիշները

Գլուխ 3 Գործնական աշխատանքների տեսակները _____ էջ 12

- Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքներ
- Տեսական գիտելիքը հիմնավորող և ամրապնդող գործնական առաջադրանքներ
- Հետազոտական բնույթի գործնական առաջադրանքներ
- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը գործնական աշխատանքում

Եզրակացություն _____ էջ 17

Գրականության ցանկ _____ էջ 18

Ներածություն



«Կրթությունը չի փոխում աշխարհը, այն փոխում է այն մարդկանց, ովքեր պատրաստվում են փոխել աշխարհը»

Պաուլո Ֆրեյր:

Իմ կարծիքով այս միտքը պետք է ուղեկցի յուրաքանչյուր ուսուցչի , չէ որ մենք ենք կերտում ապագա քաղաքացուն՝ ապագան կերտողին:

Հասարակական կյանքում տեղի ունեցող գլոբալ գործընթացները պահանջում են էական փոփոխություններ նրա բոլոր բնագավառներում, ներառյալ դպրոցներում:

Կրթության իմաստը սոցիալական փորձի կիրառման հիման վրա տարբեր ոլորտներում խնդիրներն ու գործունեությունն ինքնուրույն լուծելու սովորողների կարողության զարգացումն է, որի տարրը սովորողների սեփական փորձն է:

Կրթության բովանդակությունը դիդակտիկորեն հարմարեցված սոցիալական փորձ է ճանաչողական, աշխարհայացքային, բարոյական, քաղաքական և այլ խնդիրների լուծման գործում: Ուսումնական գործընթացի կազմակերպման իմաստը կրթության բովանդակությունը կազմող ճանաչողական, հաղորդակցական, կազմակերպչական, բարոյական և այլ խնդիրների ինքնուրույն լուծման սովորողների փորձի ձևավորման համար պայմանների ստեղծումն է:

Արդի կրթությունը , որն իրականացվում է ըստ հանրակրթության պետական չափորոշչի ,ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումներից:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի , արժեքների , հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Հանրակրթության դերը պայմանավորված է նրա գործնական–կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Այս գործում կարևոր են դառնում դասապրոցեսում կիրառվող գործնական աշխատանքները: Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառություն): Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ: Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ: Գործնական աշխատանքներն աշակերտների մոտ խթանում են հետաքրքրություն , ինքնուրույն մտածողություն , իրավիճակները գնահատելու և վերլուծելու կարողություն:

Սույն հետազոտական աշխատանքն ունի նպատակներ և խնդիրներ , որոնք ներկայացվում են ստորև:

Նպատակներ՝

- Խթանել գործնական աշխատանքների իրականացումը աշխարհագրության դասերին:
- Համակարգել գործնական աշխատանքների տեսակները:
- Ամրագրել գործնական աշխատանքների տարբեր տեսակների նշանակությունը ուսուցման պրոցեսի տարբեր փուլերում:

Խնդիրներ՝

- Ուսումնասիրել գործնական աշխատանքների տեսակները:
- Վերլուծել գործնական աշխատանքների անցկացման մեթոդաբանությունը և գնահատման չափանիշները:
- Գնահատել գործնական աշխատանքների դերը ժամանակակից կրթական գործունեության մեջ:

Գլուխ 1 Գործնական աշխատանքների դասակարգումը

Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ անպայմանորեն ազդելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը: Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ. հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագործում աղյուսակների և գծապատկերների տեսքով, մոդելների, ձևանմուշների և մանրակերտերի (մակետների) պատրաստում, դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր (ստենդներ), տեսաֆիլմեր, էլեկտրոնային ներկայացումներ և այլն), լաբորատոր աշխատանքների կատարում:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

ա/ **վերարտադրողական,** որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն),

բ/ **մասամբ որոնողական,** երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),

գ/ **ստեղծագործական,** երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ):

Գլուխ 2 Գործնական աշխատանքների կիրառությունը «Աշխարհագրություն» առարկայի շրջանակներում

Աշակերտի ձեռք բերած գիտելիքները հիմնավոր և օգտակար են այնքանով, որքանով նա կարող է դրանք կիրառել: Այդ գիտելիքների կիրառությունների կարողությունը զարգացնելու նպատակով նախատեսվում են գործնական աշխատանքներ:

Գործնական աշխատանքները բազմազան են և ելնելով ուսումնական առարկայի առանձնահատկություններից՝ կարող են լինել տարբեր պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում , տեղանքում կողմնորոշվելու, գործիքներով աշխատելու կարողություն, լաբորատոր պայմաններում փորձ, տեսական կիրառություններ կամ մոդելավորում, մակետների կազմում , նոր տեխնոլոգիաների յուրացում և այլն: Կիրառություններից առանձնահատուկ արժեք ունի միջառարկայական կապերի խթանումը: Այս աշխատանքները կարող են արվել և՝ դասաժամի ընթացքում, և՝ դասից դուրս: Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

Աշխարհագրություն առարկայի շրջանակներում գործնական աշխատանքները խիստ կարևոր են և կազմում են առարկայի բովանդակության անբաժանելի մասը: Գործնական աշխատանքները կապի միջոց են տեսականի և գործնականի միջև: Դրանց շնորհիվ սովորողները ձեռք են բերում բնության երևույթներն ուսումնասիրելու, սարքերից օգտվելու , մեծություններ չափելու , քարտեզ կարդալու , քարտեզներն ու վիճակագրական նյութերը համադրելու և վերլուծություններ կատարելու կարողություններ: Գործնական աշխատանքները նպաստում են դպրոցականների աշխատասիրության ձևավորմանը , զարգացնում են ինքնուրույնություն , տրամաբանական մտածողություն և գործնական հմտություններ:
Որպես դպրոցական առարկա՝ « Աշխարհագրության » առանձնահատկությունն այն է ,

որ գիտելիքների յուրացման համար անհրաժեշտ է տեղեկատվության տարբեր աղբյուրներից (տեքստային , քարտեզագրական , վիճակագրական և այլն) օգտվելու կարողություններ ունենալ:Այդ կարողությունների ձեռքբերումը հնարավոր է հատկապես գործնական աշխատանքների կատարման ընթացքում:

Աշխարհագրության գործնական աշխատանքները բավականին բազմազան են իրենց բովանդակությամբ (որոշել , բնութագրել , գնահատել , բացատրել , կանխատեսել) , աշխարհագրական տեղեկատվության աղբյուրներով (քարտեզ , տեքստ , նկար , սխեմա , աղյուսակ , կինո , օդալուսանկար , համակարգիչ , համացանց) , աշակերտների ինքնուրույնության աստիճանով (ինքնուրույն , խմբում , դասարանում՝ ուսուցչի ղեկավարությամբ) , աշխատանքի արդյունքները ներկայացնելու ձևով (տետրում ՝ սխեմաների աղյուսակների , նկարագրությունների տեսքով, ուրվագծային քարտեզում , ռեֆերատ , դաշտային օրագիր , նախագիծ , սահիկաշար և այլն) :

Գործնական աշխատանքները ցանկալի է անցկացնել թեմայի ուսումնասիրության վերջում կամ նոր նյութի սկզբում: Գործնական աշխատանքներին կարելի է տրամադրել ամբողջ դասաժամը կամ դասի մի մասը՝ կախված աշխատանքի բովանդակությունից:

Գործնական աշխատանքների կատարման արդյունքում աշակերտներն ինքնուրույնաբար կատարելագործում են ավելի վաղ ստացած գիտելիքները, գտնում են հնարներ առաջադրած խնդիրներն իրականացնելու համար: Միաժամանակ , աշակերտների ինքնուրույն կատարված աշխատանքները մեծացնում են սերը և հետաքրքրությունը աշխարհագրության նկատմամբ , նպաստում գիտելիքների ամրապնդմանը:

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են երկու ձևով:
Առաջին՝ սովորողը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Մյուս սովորողները անհրաժեշտության դեպքում կատարում են համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ:
Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր սովորողին տալով անհատական կամ տարբերակված

առաջադրանք: Այս դեպքում նախընտրելի է, որ աշխատանքները կատարվեն դրանց համար նախատեսված առանձին տետրում, որն ուսուցիչն ստուգում և գնահատում է դասի ընթացքում կամ դասերից հետո:

Տեղանքում իրականացվող գործնական աշխատանքներն անցկացվում են խմբային մեթոդների կանոններով:

- **Գործնական աշխատանքների նպատակները**

- Մարմինների , նյութերի հատկությունների ուսումնասիրում,
- Քանակական օրինաչափությունների հայտնաբերում կամ ստուգում,
- Բնության որևէ երևույթի դիտում և ուսումնասիրում,
- Սարքերի կառուցվածքի և աշխատանքի ուսումնասիրում,
- Քարտեզագրական , գրաֆիկականև ելակետային վիճակագրական տվյալների վերլուծություն

- **Գործնական աշխատանքների ընթացքին ներկայացվող մեթոդական պահանջներ**

- ✓ *Նախնական զրույց* – դպրոցականներին ծանոթացնել յուրաքանչյուր գործնական աշխատանքի նպատակներին:
- ✓ Օգտագործել հրահանգչական քարտ – թերթիկներ՝տարբերակված ուսուցման սկզբունքները հաջողությամբ իրագործելու համար:
- ✓ *Աշխատանքի կատարում* - Դասարանում ձևավորել ստեղծագործական համագործակցության մթնոլորտ , չկաշկանդել սովորողների նախաձեռնողականությունը , նրանց հնարավորություն տալ ընտրելու նախանշված նպատակին հասնելու ուղիներ:
- ✓ Կիրառել խաղային տարրեր , ավելի հաճախ ձևակերպել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ , աշխատանքների արդյունքների արձանագրման ինքնքտիպ միջոցներ (աշակերտների ցանկությամբ) :
- ✓ Աշակերտներին հաղորդել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրները , հարկ եղած դեպքում նրանց տրամադրել լրացուցիչ նյութեր:

- ✓ Պլանավորել աշխատանքը , հաշվարկել կատարման համար անհրաժեշը ժամանակը:
- ✓ *Արդյունքների ամփոփում* - Բոլոր գործնական աշխատանքները պետք է գնահատվեն կամ միաժամանակ , կամ աստիճանաբար՝ ըստ դրանց պատրաստվածության աստիճանի:

- **Գործնական աշխատանքների գնահատման չափանիշները**

- ❖ 1 է գնահատվում- Սովորողը աշխատանքը չի կատարել
- ❖ 2 է գնահատվում- Սովորողը փորձ է արել կատարելու աշխատանքը ,սակայն ստացված արդյունքը չի համապատասխանում աշխատանքի բովանդակությանը
- ❖ 3 է գնահատվում- Սովորոողը հանձնարարության ուղղությամբ կատարել է որոշ աշխատանք,սակայն պատկերացում չունի հարցի աշխարհագրական բովանդակության վերաբերյալ,ինչի հետևանքով ստացվել են սխալ արդյունքներ:
- ❖ 4 է գնահատվում – Սովորողը կատարված աշխատանքի վերաբերյալ ունի մակերեսային պատկերացում ,կատարել է 1-2 ճիշտ գործողություն և ստացել առնվազն մեկ դրական արդյունք:
- ❖ 5 է գնահատվում- Սովորողը աշխատանքը պատկերացնում է ընդհանուր գծերով,կատարում է առանձին պարզ գործողություններ (հաշվարկներ,կոնկրետ օբյեկտների դիտում,չափում,ուրվագծային քարտեզների գունավորում և այլն):
- ❖ 6 է գնահատվում- Սովորողը ապահովում է գործնական աշխատանքի կատարման միայն մեխանիկական կողմը , չի պահպանում աշխատանքի կատարման տրամաբանական հաջորդականությունը , ուսուցչի օգնությամբ կատարում է ստացված արդյունքների պարզ նկարագրություն:
- ❖ 7 է գնահատվում- Սովորողը աշխատանքի կատարման մեխանիկական կողմի ճիշտ հաջորդականությունն ապահովելու հետ մեկտեղ նկարագրում,բացահայտում է աշխատանքի կատարման ընթացքը ,բայց մասնակիորեն է պատկերացնում ստացված արդյունքների կիրառման հնարավորությունները ուսումնական և այլ իրավիճակներում:
- ❖ 8 է գնահատվում- Սովորողը կարողանում է ապահովել հանձնարարության

կատարման հիմնական պահանջները ,պահպանում է աշխատանքի կատարման տրամաբանական հաջորդականությունը ,ստանում է պահանջվող բոլոր արդյունքները ,որոնց հիմնան վրա կատարում է փաստարկում և մասնակի վերլուծություն :Ստացված արդյունքները կարողանում է կիրառել միայն ուսումնական իրավիճակում:

- 9 է գնահատվում – Սովորողը կարողանում է ապահովել աշխատանքի լիարժեք կատարումը , տիրապետում է դրա համար անհրաժեշտ բոլոր գործնական հմտություններին , ստացված արդյունքների հիման վրա կարողանում է կատարել համապարփակ վերլուծություն , այդ արդյունքները կարողանում է կիրառել ուսումնական և համարժեք (անծանոթ) իրավիճակներում: Կարողանում է ճշգրիտ կապեր ստեղծել իր կատարած այլ գործնական աշխատանքների միջև:
- 10 է գնահատվում- Սովորողը կարողանում է ճիշտ մոդելավորել ստացված արդյունքները , դրանց հիման վրա կատարել աշխարհագրական կանխատեսումներ , տալ գնահատականներ (արժևորել) : Ստացված արդյունքները կարողանում է կիրառել ցանկացած իրավիճակում : Կարողանում է մոդելավորել աշխարհագրական բովանդակությամբ թեմատիկ գործնական աշխատանքները:

Գլուխ 3 Գործնական աշխատանքների տեսակները

Գործնական առաջադրանքի տեսակը հիմնականում պայմանավորվում է նրա ձևակերպմամբ, ձևակերպման մեջ առկա տվյալներով և դրանցով պայմանավորված՝ պահանջով, առաջադրանքի հանձնարարման պահով աշակերտի (կամ աշակերտների, եթե խմբային է) կարողություններով և այլ հանգամանքներով: Այսպիսով՝ գործնական աշխատանքները կարելի է խմբավորել:

- **Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքներ**

Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքները կոչված են նպաստելու հենց դասի ընթացքում տեսական նյութի յուրացմանը և կարող են օժանդակել աշակերտին ինքնուրույն հանգել տեսական այն հետևություններին, որոնց մասին խոսք է գնում ուսումնական թեմայում: Որպես կանոն, դրանք առաջադրվում են դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի կողմից պարտադիր ուղղորդման կարիք են զգում: Դրանք գնահատման ենթակա չեն:

Այս բնույթի առաջադրանքներ են ուրվագծային քարտեզներով կատարվող աշխատանքները , քարտեզագրական նյութի , դիագրամների , գրաֆիկական և վիճակագրական նյութերի ուսումնասիրության ու վերլուծության հետ կապված առաջադրանքները:

Օրինակ՝ Թեմա ՝ Եվրասիայի ներքին ջրերը

Օգտվելով Եվրասիայի ֆիզիկական քարտեզից դուրս գրել առավել խոշոր 10 գետերը:



- **Տեսական գիտելիքը հիմնավորող և ամրապնդող գործնական առաջադրանքներ**

Այս խմբի մեջ կարելի է դասել բոլոր այն առաջադրանքները, որոնք կարող են նպաստել այս կամ այն տեսակի հմտության ձևավորմանը (խնդիրների լուծում , աշխարհագրական մոդելների պատրաստում, բնության ուսումնասիրության տարբեր սարքերի օգտագործում և տվյալների հավաքում , քարտեզագրական ու վիճակագրական տեղեկույթի վերլուծություն և այլն)։

Օրինակ՝ Խնդիրների լուծում

Թեմա՝ Աշխարհի բնակչությունը

Որքա՞ն բնակիչ կունենա 8 մլն բնակչություն ունեցող երկիրը մեկ տարի հետո, եթե այդ ընթացքում ծնելիությունը կազմել է 27 ‰ , մահացությունը՝ 12 ‰ :

- **Հետազոտական բնույթի գործնական առաջադրանքներ**

Այս խմբի մեջ կարելի է դասել այն առաջադրանքները, որոնց կատարումը պահանջում է ինքնուրույն հետազոտության իրականացում, երևույթների կամ օբյեկտների հատկությունների, օրինաչափությունների, փոխադարձ կապերի բացահայտում և հիմնավորում։ Նման առաջադրանք հանձնարարելիս, որպես հուշվածք կարելի է տալ երևույթի կամ օբյեկտի զգայական ընդհանուր մեկնաբանությունը, նրանում նկատվող որոշակի օրինաչափությունները։

Օրինակ՝

Թեմա՝ Աշխարհի քաղաքական բաժանումը

Երկրի քաղաքաաշխարհագրական դիրքի բնութագրումը , դրա փոփոխությունը ժամանակի ընթացքում:

Հետազոտական բնույթի գործնական առաջադրանքների մեջ առանձնակի կարևորություն ունեն դաշտային աշխատանքներն ու էքսկուրսիաները , դիտումներն ու փորձերը :

- ✓ **Դաշտային աշխատանքները** կազմակերպեու համար անհրաժեշտ է նախապես ծրագիր կազմել ,որտեղ պետք է հստակ ներկայացվեն.

- այցի թեման ,
- նպատակը,խնդիրները ,
- տնտեսաաշխարհագրական օբյեկտը , գտնվելու վայրը , այցելության ժամանակը,
- հետազոտական աշխատանքները,
- տվյալ թեմայի վերաբերյալ դասարանային ուսումնասիրությունները ,
- աշակերտներին տրվելիք հստակ հրահանգները ,
- ծանոթացում այցելության օբյեկտում վարքի կանոնների պահպանման անհրաժեշտությանը:

Այցի ընթացքը

- Եթե խումբը մեծ է ,կարելի է բաժանել մի քանի մասի:
- Դիտարկումների ժամանակ աշակերտները պետք է կատարեն գրառումներ այն մասին,թե.

1)ինչ խնդիրներ լուծեու համար են այց կատարել,

2)ինչ սովորեցին այցը կատարելուց հետո:

Դաշտային աշխատանքից կամ էքսկուրսիայից հետո հանձնարարել աշակերտներին կազմել հաշվետվություն կատարած դիտարկումների արդյունքների մասին:

✓ **Էքսկուրսիաներն** ունեն ճանաչողական և դաստիարակչական մեծ նշանակություն : Դրանք ընդլայնում և խորացնում են սովորողների գիտելիքները: Էքսկուրսիաների ժամանակ բնության հետազոտական բնույթի ուսումնասիրության շնորհիվ աշակերտները սովորում են կողմնորոշվել տեղանքում, կատարել դիտումներ , համեմատություններ , կապեր հաստատել դիտարկված բնության առարկաների և երևույթների միջև:

Դրանք ձևավորում են կարողություններ ինքնուրույնաբար ուսումնասիրելու շրջակա իրականությունը: Էքսկուրսիաների ժամանակ ուսուցչի ջանքերը պետք է ուղղված լինեն սովորողների բնագիտական հասկացությունների ճշգրտմանն ու ընդլայնմանը , տրամաբանական մտածողության զարգացմանը , գիտական աշխարհայացքի ձևավորմանը. դիտումներ կատարելու կարողության ձևավորմանը:

Յուրաքանչյուր էքսկուրսիայի ուսուցիչը պետք է նախապատրաստվի հանգամանորեն , քանզի էքսկուրսիայի հաջողությունը մեծապես կախված է դրա կազմակերպվածությունից:

✓ Դասընթացում մեծ նշանակություն է տրվում երեխաների կողմից շրջակա բնության **դիտումներին :** Բազմաթիվ կոնկրետ պատկերացումներ աշակերտների մոտ ձևավորվում են բնության անմիջական դիտումների և ուսումնասիրությունների հիման վրա : Դիտումների շնորհիվ սովորողները անմիջականորեն ընկալում են կենդանի և անկենդան բնության բաղադրատարրերը , որի շնորհիվ նրանց մոտ ձևավորվում են իրական պատկերացումներ և հասկացություններ , որոշակի կարողություններ ու հմտություններ: Դիտումները հնարավորություն են տալիս շրջակա բնության վերաբերյալ ձևավորել կոնկրետ և կերպարային պատկերացումներ , հասկացություններ և դրանց հիման վրա զարգացնել այդ տարիքի երեխաների տրամաբանական մտածողությունը , գրավոր և բանավոր խոսքը:

✓ Սովորողների ճանաչողական ունակությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեն նաև **փորձերը :** Դրանք հնարավորություն են տալիս տեսնել զանազան երևույթներ , ծանոթանալ բնական առարկաների հատկություններին ՝ հասկանալով բնական երևույթի էությունը , բացահայտել կատարած փորձը : Փորձերը ևս զարգացնում են սովորողների դիտողունակությունը , մտածողությունը , տրամաբանությունը , խոսքը և այլն :

- **Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը գործնական աշխատանքում**

Տեղեկատվական տեղխնոլոգիաները ուսուցչի համար անփոխարինելի են որպես գիտելիքի աղբյուր և գործիք, որոնց օգնությամբ կարելի է կառուցել դասը: Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման շրջանակները լայն են: Դրանք կիրառվում են համադպրոցական, ինքնուրույն աշխատանքներ, թիմային աշխատանքներ, մրցույթներ կազմակերպելու համար, ստեղծագործական նախագծերի մշակման և ներկայացման, ցուցադրումների համար: Գործնական պարապմունքի ընթացքում զարգանում են մկնիկով և ստեղնաշարով աշխատելու հմտությունները , տեղեկույթ հավաքելու և համակարգելու կարողությունները: Այդ հմտությունները և կարողությունները անհրաժեշտ են համակարգիչը կիրառելու , համացանցից օգտվելու համար: Հոգեբանները նկատել են, որ մարդիկ հիշում են իրենց հետաքրքրած նյութի վերաբերյալ կարդացածի 10 %-ը, լսածի 20%-ը, իսկ տեսածի 30%-ը: Այդ իսկ պատճառով էլեկտրոնային սահիկահանդեսների կամ համակարգչային ցուցադրումների օգտագործումը , որոնք ներգործում են տեսողության, լսողության և զգացողության վրա, օգնում է հասնելու լավագույն արդյունքի:

Եզրակացություն

Այսպիսով՝ գործնական աշխատանքների դերը շատ մեծ է : Դրանք խիստ կարևոր են ուսուցման տարբեր փուլերում թե՝ նախապատրաստական , թե՝ ուսուցման ,թե՝ գնահատման : Գործնական աշխատանքները երեխաների մոտ ձևավորում են հետևյալ հմտությունները.

- Զարգացնում են հետաքրքրությունը սովորելու նկատմամբ:
- Ձևավորում են երեխաների ստեղծագործական կարողությունները:
- Ակտիվացնում են սովորողների տեսական և գործնական ճանաչողական գործունեությունը:
- Զարգացնում են նրանց մտածողությունը:
- Զարգացնում են գործնական հմտությունները:
- Ապահովում են բոլորի ներգրավածությունը դասապրոցեսին:
- Զարգացնում են անհատական, խմբային և համագործակցային աշխատանքային հմտությունները:
- Ստեղծում են միջառարկայական և ներառարկայական կապեր: Ամրապնդում են գիտելիքները:

Գրականության ցանկ

1) https://erteam.ru/hy/education-as-a-priority-of-modern-education-priorities-in-education.html

2) Հանրակրթության պետական չափորոշիչ Հանրակրթության պետական չափորոշիչ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

3) https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_80.html

4) Գ. Հովհաննիսյան, Մ. Իսկանդարյան , Աշխարհագրություն 6 , ուսուցչի ձեռնարկ Երևան « Լույս » 2007

5) Ա. Հովսեփյան , Գ. Հովհաննիսյան, Խ. Սարգսյան , Աշխարհագրություն 10-12 , ուսուցչի ձեռնարկ , « Զանգակ-97 » , Երևան – 2010

6) https://krtahartak.am/courses/obligatory/course-013/lessons/%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%b6%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%a1%d5%b7%d5%ad%d5%a1%d5%bf%d5%a1%d5%b6%d6%84-%d6%87-%d5%af%d5%ab%d6%80%d5%a1%d5%bc%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6/

7)https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-30/6d8bdd2619cc9f3c89311120e60fad9f.pdf

8)Հ Մ.Մանասյան , Ա.Հովսեփյան ,Հայաստանի աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ Երևան « Տիգրան Մեծ » 2009

9) Գ. Հովհաննիսյան , Բնություն 4 , ուսուցչի ձեռնարկ , Երևան « Լույս » 2000